

ՏՆՕՐԷՆ-ԵՍՏՐԱԳՐՈՒՊԵՏ

Հ. ՄԱՄՈՒՐԻԱՆ

ԲԱԺԵՆԱԳԵԳՐՈՒԹԻՒՆ

Տարեկան	600 դր.
Վեցամսեայ	350 »
Թռամսեայ	150 »
Տրամսամսեայ տրկ.	70 »

Բաժանորդագրութիւնը կ'ընտան  
ամեն ամսոյ 1 եւ 1/2

100 ՓԱՐՍ



Fondateur  
M. MAMOURIAN  
Directeur-Rédacteur en chef  
H. MAMOURIAN  
„Arévélian Mamoul,  
JOURNAL ARMÉNIEN  
QUOTIDIEN

Օրաթերթ ազգային եւ քաղաքական

100 ՓԱՐՍ

# ԱՆՈՒՂՂԱԿԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ

«Չէզոքները» կամ ոչ-կուսակցականները ինքնարդարացումի չլըմեղանքով մը չեն կրնար, և իրաւունք չունին, ներքին քայքայումի պատասխանատուութիւնը նետելու Հայ յիշատակութեան ուսին վրայ իրենց զանգուածային անտարբերութիւնը մեծագոյն պատասխանատու է այդ ազգաբնիւնի իրենց ազգային ոգիով մտած ըլլալին հասանքին մէջ, և իրենց ենթադրուած իմաստութեամբ օգտակարապէս գործած ըլլալին յանուն ազգային շահերու, կը հաւատամ, թէ հատուածական չորիքը մ'յնքան ծաւալ պիտի չգտնէր մեր մէջ:

(Հայտնաւ իշխանաւոր)

ՄՈՒՇԵՂ ԱՐԳՊ.

Վերելի ստղերը կ'ընդհանրէ Մուշեղ Արքեպիսկոպոսի, մեր ներհուն ու յըստակատես Սրբազան Աշխատակցին Պատժոն հրատարակած «Հայկական Մըզաւաւը», Քննական վերլուծումները անուն հատորէն, 1916ին լոյս տեսած:

Մտաբարեական ոգիով մը գրուած այս ստղերը որ իր յառաջարկէն կը փրցնենք, որքան կ'յարմարին մեր ներկայ վիճակին և որքան համապատասխան են, տիրող այն մտայնութեան, որ ծնունդ գտաւ մեր ժողովուրդի առհասարակ բոլոր խնկերուն և դատակարգութեան մէջ:

Միթէ այդ բոլոր դատակարգութիւնը առանց որոշ բաժանումներու ենթարկուելու իրաւունք սենին, իրաւատուութիւն ունին, արտօնուած են քննադատելու կամ իրենց արժանարարներն ստարկայ դարձնելու, Հայրենիքն այս վիճակին ենթարկող կուսակցութեան մը գործելակերպը:

Ժխտական պիտի ըլլայ արդիւնքը:

Չէզոքները կամ ոչ- կուսակցականները բաց բաժանապէս իրաւունք չունին քննադատութիւններու տարափի մը տակ ողջելու հայրենազաւ այդ կուսակցութիւնը, որովհետեւ թերեւս անոնցմէ աւելի նոյնքան և պատասխանատու են իրենց. Հայաստանի արդի անկերպարանն ու ցաւալի վիճակին:

Այդ չէզոքները կամ ոչ կուսակցականներն ևս կ'ըստնուին երկու որոշ դատակարգութիւն:

Անոնք որ իրենց չէզոքութիւնը կամ նոչ կուսակցականութիւնը սրահելով և անոր կտուած մնալով իրենց գերագոյն առանձնաշնորհում մը, Հայրենիքի տիրամուկներուն դէմ պայքարող անոնց դէմ ծառայող, զանոնք քննադատող և անոնց բոլոր թերութիւնները միտումի թաւաղ ընդգրկուող կուսակցութիւններու և քննադատներու դէմ արտայայտուած են և իրենց չէզոքի և ոչ-կուսակցականի համակրութեամբ զանոնք պաշտպանած և երկրորդ՝ անոնք, որոնք բոլորովին անտարբեր և անփոյժ և ո՛չ իսկ հետաքրքրուած են իրենց հայրենիքի անցողիկ անցողիկ և այսօր միայն ամուսնաւոր ընդունակութիւն մը ցոյց կուտան:

Անշիջներու վրայ իրաց ներկայ վիճակին պատամխանատուութիւնը շատ աւելի է, քան երկրորդ դատակարգին վրայ:

Անշիջները վառ պահելով իրենց հետաքրքրութիւնը Հայրենիքի գործոց, կուրթէն համակիրն են, եղած են և այն անուղիղ գաղափարն ունեցած, թէ Հայրենիքի զիջումներուն դէմ խօսիլ, զանոնք քննադատել, այսպէս, Հայրենիքի դէմ գաւառանի կ'ընտանակէ, չեն կրցած պետութիւն և կառավարութիւն իրարմէ զանազանել և անգիտակցօրէն մեղաւորելու եղած են օրուան վարչիներուն հետ և որով նոյնքան պատասխանատու Հայրենիքի վիճակուած ներկայ ազգախն:

Երկրորդ դատակարգը, թէ և ոչ արդարանալի իր անտարբերութեամբ, այսպէս և անոր համար, որ չէ յաջողած բարձրել թէ լաւ կամ վատ օրերուն մէջ, որքան ալ չէզոքութեան խուսափիլ չուզէ, պիտի ենթարկուի հասարակաց ազգախն, և չպիտի կրնայ անմասն մնալ այն բոլոր պարտականութիւններէն, որոց կամայ ակամայ պիտի ենթարկուի, ինչպէս երջանիկ, նոյնպէս և դժբախտ օրերուն մէջ:

Հետեւաբար որքան արժանի է քննադատութեան ու դատախնատումի Հայաստանի նախորդ կառավարութիւնը, չէզոքները կամ ոչ-կուսակցականները ևս չեն կրնար պրծիլ պատասխանատուութեանէ:

Ինչպէս որիչ առթիւ ըսած ենք, այս ազգախն հաւանականաբար տեղի չէր ունենար եթէ ամբողջ հայ ժողովուրդը կազմակերպուած ու կազմ ու պատրաստ գտնուէր ամեն պատահականութիւններու առջև, չթողնելով իր հայրենիքի բաղդը միակ կուսակցութեան մը ձեռքը որ ժողովուրդին ունկալմակերպութեան օգուտ քաղէ, չարաչար գործածելու համար իր տիրամուկ հակութիւնը:

Արդեօք ներկայի այս դառն գաւը, չպիտի ազգէ մեր վրայ և այս տխուր փորձառութեան վերջ, դեռ պիտի յամենա՞նք ու ատաղանիք զգալու անհրաժեշտ պէտքը կազմակերպուելու և ամփոփուելու նպատակալարմար կուսակցութեան մը մէջ, և այսպէս զօրաւոր ոյժ մը կազմելով, հեռացնել յաջողելու համար բոլոր քննադատ և ետաւեր տարրերը, որոց գործունէութեան արգասիքը կ'վայելին ներկայիս մէջ:

Նորութեան կարգ անցած է ժամանակէ մը ի վեր կազմութիւնը կարգ մը Միութիւններու, որոնք սուսկի պէս կ'ընտանին անոր չափ կեանք մը ու ունենալու համար. Այն սխալ և անտեղի գաղափար կայ թէ ժողովուրդը կը իրաւել կուսակցութիւններէ, իսկ ընդհակառակը եթէ Միութեան անուամբ հրատարակուի, սիրայօժար կ'մասնակցի, այո՛, կ'մասնակցի քանի մը նիստերու ներկայ գտնուելու և ապա անգամ մըն ալ չերեւելու համար Ո՛չ, սխալ է սխալ: հազար անգամ սխալ, պէտք է որ այդ անգիտակ ժողովուրդին, ինչ

դատակարգի կամ կացութեան տէր ալ եղած ըլլայ, զգացնել թէ իր փրկուելու քաղաքական նպատակալարմար և զուտ քաղաքական հոգի վրայ կանգնող կուսակցութեան մը յարելով կրնայ ձեռք բերել:

Այլեւս միտալն քաղաքական կուսակցութիւններն են որ պիտի կրնան գործել և ձայն բարձրօցնել զիւրանագիտական և մեր հայրենի աշխարհնեւրուն մէջ:

Միութիւններ, ընկերակցութիւններ այլեւս դատապարտուած են անհետանալու, անոնց համար գործելու յարմար հող չկայ, անոնք այն ժամանակ միայն օգտակար կրնան հանդիսանալ, երբ տիրանանք հայրենիքի մը, ուր անոր վերաշինութեան նուիրուելու, զանազան ու բազմազան պահանջներու գոհացում տալու համար կրնան այդ միութիւնները իրենց ազգօգուտ գերը ըստ ատեններ:

Ամեն հայ իր որոշ գոյնը և իր վճռական գերը պէտք է ունենայ այս ազգին մէջ, այսպէս կամ այնպէս ամեն հայ պէտք է պատկանի կուսակցութեան մը, իր սկզբունքներուն, իր հակութիւններուն, իր հայեացքներուն և իր խառնուածքին համեմատ:

Դաշնակցականը, Հնչակեանը, Ռամկավարը, Ազատականը, Ժողովուրդականը ամենք ալ իրենց արդի կազմակերպութիւններով պէտք է ներկայանան Մէն մի իր ոյժերուն պէտք է կոթնի, պէտք է չէզոք կամ ոչ-կուսակցական պիտակ տակ հայր գտնուին, որոնք բարիքէ աւելի չարիք կ'հասցնեն այս դժբաղդ ազգին, իրենց անպատասխանատու անգիտակցութեամբ, համահաւասար կերպով վերաբերուելով ամենքին ալ հետ, թէ բարոյապէս և թէ նիւթապէս:

Պէտք է վերջ գտնէ այս քառային վիճակը, որ ցորդ մեր բոլոր զգժբաղդութեանց պատճառ հանդիսացած է, ալ բաւ է որքան մնացին չէզոք կամ ոչ կուսակցական:

Այս ազգը չփնտնար, չկարծանիր, պիտի վերականգնի, ուռճանայ, զարգանայ ու տէր դառնայ իր հայրենի իրաւունց, բայց անոր վերականգնումին ստոր հանդիսանալու համար պէտք է այլեւս ականատես ըլլանք չէզոքներու և ոչ կուսակցականներու անարդարանալի անպատասխանատուութեան:

Հ. Թ.

## ԼԱՅՅԵԼՔԻՆ ՄԱՅՔ

Մեծ յուզումի մէջ է Հանրապետութեան Բարիքի պատուիրակութիւնը:

Հասած հետագիրը, թէեւ կտրուած, քիթը ու քերանք արջասպաւած, բաւականէն աւելի արտայայտիչ էր և ցոյց կուտար զգայուն բանաստեղծ, ճարտասան հեռասոր, մտազգայ գրագէտ և մետասանիրող ժամուն աւտողձագործին սրտին կամ քարակոփին քերտին տակ զիւրանագէտ կերտած Պ. Ահարոնեանի յոյզը և իր անվերջ այն վայելիքն որ Հայկական Հանրապետութեան մեծամասնականներու ազգացութեան տակ ընկնելու լուրը կ'ստանար:

Ինչ պիտի ըլլայ իր վիճակը, ինչպէ՞ս պիտի յաջորի իր գոյութիւնը տպահովել Բարիքի մէջ իր արբանակներուն հետ, ինչպէ՞ս պիտի պահպանէ այն փութամ ու ճոխ կեանքը որու մէջ յաջողեցաւ քաշկռտիլ իր գոյութիւնը Եւրոպայի մթնոլորտին մէջ, անս ձեղի նոր հարց մը եւս:

Բայց մի՛ վըզուելք, մի յուզուելք, մի՛ մտասան շուքիք, Բարիքի հայկական հանրապետութեան երբեմնի լիազօրը, գեղականը, նախարարապետի փոխանորդը, հանրապետութեան առանձնաշնորհու շփացած ներկայացուցիչը, միջոցը գտած ըլլալ կ'երեւի:

Կ'մերժէ, կ'բողբէ, կ'ընդզիջէ Հայկական Հանրապետութեան արդի կազմին ու գոյավիճակին դէմ և փրկելու համար Հայաստանը, կ'որոշէ Բարիքի Ավրիւ Մարտի Հայկական պատուիրակութեան արարթմանին մէջ՝ հաստատել նոր Հայաստանը, որու անկախութեան և մեծ ու ամբողջական Հայաստանի միացման աքաղ անշուշտ բաղդը պիտի ունենայ հայութիւնը մտաբար կարգալուստ:

Այդ նոր Հայաստանը՝ հայութիւնը պիտի պարտի դարձեալ Դաշնակցութեան, ինչպէս միւսը անոր կ'պար-

տէր, անոր ձեռնար, անոր գործը, անհուն գոհարբութիւններով ձեռք բերուած... անոր երկունքէն որ ծառք և որ ֆալս ճոնջցուած:

Անշուշտ Պ. Ահարոնեան արդէն կազմած կ'ըլլայ իր նոր դակիւնը, ըստանձնելով իրաց բնական բերմամբ նախարարապետութիւնը, արտաքին գործոց նախարարութիւնը և փոխաւորաբար ներքին, պատերազմական, ծովային և բոլոր միւս նախարարութիւնները, և իմաստաւորի օղային նախարարութիւնը, իսկ ելեւմտականը յանձնած ըլլալու է Վարանդեանի, կամ ժընէվի համբաւաւոր բերօրին, որ գաղափարն ու մենաշնորհն ունի, ուրիշ, արծաթ, աղամանք, և նման անուններ կրող քաղաքներէ Ավրիւ Մարտի Հայաստանին կ'ընդունաւորուէ:

Բայց կատակը մէկդի, կ'վայնամ որ նորէն իմարութիւն մը չգործէ այդ անպատասխանատու զիւրանագէտ բանաստեղծը և Եւրոպայի առջև գործեալ չվարկաբեկէ հայութեան անունը, անս այս է բոլոր երկիւղս, որովհետեւ այդ մարդը իր ետաւերի անարբերիկ նկարագրին բերումով իրեն անպատասխանատու մը իր ըրածին ու զրածին, անհաւանական չէ որ նոր կ'օ մըն ալ գործէ, իր անվերջանալի կ'օրովը:

Եթէ այժմ հայ հանրապետական կատակարարութեան վարչիները քաղաքական հասկանալի արգելքներու բերումով, չպիտի յաջողին այդ մարդը չէզոքացնել և անգործութեան դատապարտել, որոնք պիտի ըլլան այդ մարդուն օձիքէն բունող և զայն գուրջ չպարտողները...

Բարիքի հայութիւնը պիտի կրնայ իր հեղինակութիւնը զգալի դարձնել և միանգամ ընդ միշտ մարքիլ ապականել այդ մթնոլորտը...

Բաժակը լեցուած չպիտի համարին ըս



ՄՏԱԲԻՆ ՊԱՏԻՆԻ

Մանրիկ ու չոր, նիհար ու սուր, դանդաղ, անփոփ, չբնեցր պրկած, սպիտակ պինտ ու...

Ժիր մեղուի մը նման կ'ընին ու կ'ձեռնածի, անին տեղ է, առանց որչառն ուր գտնուելու...

Քեռու այս պատճառով համար ըլլայ իր անփութութիւնը իր խել կեանքին համար, որ...

Ինչպիսի, ուսեայ, չէ զիցցած արժեքներ, անտարբեր գտնուած է, հակառակ իր ունեցած...

Լամարտակախոս՝ չղկերի ճշմարտութիւնը բացայայտ խօսելու, պակասութիւններ՝ կտրուկ...

Փիլիսոփայ մըն է և միանգամայն կրնայ զիտուել մը նկատելով, փիլիսոփայ՝ կեանքի առեղծուածին...

Կ'ըմբռնուի զինքը, որ հեռուն՝ գաւազանին կռնած արդէն կ'սպասէ զայնուստի՝ սիրուն կատակ մը, սուր դիտողութիւն մը, հնգանաթի ճիշտ մը, դէպքի մը ծրար բանալու պատրաստ է:

Տիպար մըն է, հազուադէպ ու զիպուտ ծակիւն՝ կեանքին նման, այն կարգի սիպար, ներքէն, որնք իրենց նմոյշներ չեն ունենար, իսկ յաջողներ բնու:

զգտածուելու որ գնաց անձամբ պաշտպանեց այդ գինուորին դատար:

70

Օգոստոս կայսրը լսելով որ Ալեքսանդր երկրիս մեծագոյն մասին տիրելէ յետոյ հարցուցած է թէ իր մը նոցանէն օրերուն ինչո՞վ կրնայ զրացիլ, այս հարցումին վրայ պարմանալով ըսաւ. «Ի՞նչ, ըսել է որ Ալեքսանդր չէր գիտեր թէ նուաճուած կայսրութիւն մը յաւ կառավարելու տեղի կարևոր պաշտօն մըն է քան թէ նոր յաղթանակներ տանելը»:

71

Հոգեկաւոր նկարիչ Չեքոփար կը մեկտարբէր ըսելով թէ իր նկարները լրացնելու համար շատ ժամանակ կը վատնէ, որուն յիշեալ նկարիչը հետեւեալ պատասխանը տուաւ. «Կը խոստովանիմ որ գծելու շատ ժամանակ կը յատկացնեմ, քայց հարկ է նաև գիտնալ թէ երկար ժամանակի համար կը նկարեմ»:

72

Մեծանուն նկարիչ Ուլիին հարցուցին թէ ինչո՞ւ իր նկարները այնչափ փայլուն և գեղեցիկ են, պատասխանեց որ «Վառն զի ներկերու մէջ ուղիղ ու կը խոսնան»:

Ազգային Անցուցարար

Քաղաքական ժողովը նախագահութեամբ նորընտիր Առաջնորդ Գերշուհի եպ. Դուրեանի իր առաջին նիստը կ'անարկէ, ի ներկայութեան Պ. Պ. Ն. Ներսէսեանի, Ա. Արիկեանի, Մ. Մանուկի, Հ. Նիգոսեանի, Գ. Փափագեանի և Ն. Իփիգենիանի:

Ժողովը որոշեց շնորհակալութեան գիր մը ուղղել առաջն. փոխանորդ Տ. Նիգոսեանի և զիւրաներու միտքով և կանոնաւոր գործառնութիւնը ապահովելու նախանձախնայութեամբ որոշեց զիւրանապետ Պ. Ներսէս Բէսիմեանի յանձնել զիւրան կակողութիւնը և պատասխանատուութիւնը և այս առթիւ պահանջեց Պ. Ն. Բէսիմեանէ ծրագիր մը մշակել և ներկայել ժողովին, պաշտօնէն պաշտօնը, անոնց պարտականութիւնները եւն. սահմանող և միեւնոյն աստիճանը, իրեն պատասխանատու հանդէպ զիւրանապետին:

Առաջնորդարանի հասցիները արդիւնաւոր դարձնելու համար, ինչպէս արդէն Պոլսոյ մէջ կ'իրարկուի, նոր սակացոյց մը պատրաստել յանձնարարեց նախագահ Ս. ք. և այս մասին ինք յանձնառու եղաւ ծրագիր մը մշակելով ժողովը նմանապէս որոշեց զիւրանապետի գործի զբաղմունքը հաստատել, այսինքն ամեն տեսակ հանգանակութիւններէ, բարենպաստակ և ազգային հաստատութիւններու կողմէ սարքուելիք հանդէսներէ ստանալ հասոյթի 5 առ հարիւրը, ինչպէս կ'ըլլայ արդէն Կ. Պոլսոյ մէջ: Նախագահ Ս. ի տառաջարկով որոշուեցաւ գանձման, ստացման և յանձնարարական մասնաւոր ընկալազիրներ և պաշտօնաթղթեր պատրաստել, հակակռի և այլ խնդրոց առթիւ կանոնաւորութիւն մը ունենալու համար:

Ժողովը նկատողութեան առեւելով որ լուսարարագետ Տ. Ղեւոնդ Ա. ք. իր տարիքի բերումով արդէն յոգնած է, որոշեց անոր օժանդակ մը տնուանել և յանձնելով Տ. Ղեւոնդ Ա. ք. ի իղմիրի և արուարձաններու բոլոր եկեղեցիներու ընդհ. լուսարարագետի պաշտօնը, Ս. Սահպանաթի լուսարարագետ կարգեց Տ. Անանիա ք. յ:

Ժողովը զբողոքեցաւ նաև կարգ մը անհատական խնդիրներով և որոշեց յառաջիկայ երեքշաբթի օր կրնին նիստ գումարել և զբողի օրակարգի խնդիրներով:

Առաջնորդ Ս. ի հրաւերով բոլոր քահանայները ևս խորհրդակցական ժողով մը ունեցած են և որոշուած է յառաջիկայ Չորեքշաբթի բոլոր իր միտքի և արուարձաններու քահանայից ներկայութեան ժողով մը կազմել և 7 քահանայներ թողակցեալ կրօնական խորհուրդ մը ընտրել, որպէսզի եկեղեցիներու բարեկարգութեան վրայ կակողութիւն ի գործ դնէ և ասկից զատ իրեն վերաբնեց ժողով նկատողութեան ենթարկէ իղմիրի Դատաստանական Խորհրդոյ առջեւ տեսնուած դատերու վճարարի և անոնց բեկանման կամ հաստատման վճիռը արձակէ:

Խմբագրութիւնն ստացած է հետեւեալ երկրորդ «Պայամարտ»ի բարեփոխեալ խմբագրութեան ուղեւայ Մ. Վ. ստորագրութեամբ գոր նոյնութեամբ կրկնատարակեց. «Անցեալ կիրակի օրուայ «Մշակութային Պատրաստ» վերնագրին տակ յօդուածով, եկաք փաստելու թէ յիշուած ձեր բարեփոխումը և վերակազմումը նորաձեւութեանց ներկայ պայմաններուն համեմատ կատարեալ եղած է: Ուստի հաճեցէք ընդունել անկեղծ և ջերմագին շնորհակալութիւններ»:

Կարգալ Հայաստանէ նոր վերադարձող ակամուտեան մը հաղորդած տեղեկութիւններուն ամփոփումը:

Ազգ. Ազգային օրրանոցի կը նուիրէ Յ. ի Տիկին Յ. Ալիբար քեչ կէկ և լոխու իր առուեսոյն որդացեալ Յակոբ Ալիբարի անուան տունախմբութեան առթիւ Պ. Աէֆէր Աէֆէրեան 5 քաչ ձիթապտուզ:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԵՐՔՈՒՄ

Պայտական «Երկիր» օրաթերթը Դեկտեմբեր 18 ի իր 383 թիւին մէջ կ'հրատարակէ Վճիռ մը գործընդհանրախորհրդով և Յ. Գրախան ստորագրութեամբ թղթակցութիւն մը ուր Սարգիս Եանիկեան Չիբուհեան զբոսբազը պատասխան մանր կուզուի վերադրել նոյն պատասխանին Չիբուհեան Ազգ. Մեքսիկեան վարժարանին մէջ կրած շարաւար գտնակոծումի մը:

Ուսումնական Խորհուրդը կուզայ ներկայ պաշտօնական կրթութեան յայտարարել թէ՛ յիշեալ վերադրութեան անտեղի է և քացարձակապէս անհամապատասխան ճշմարտութեան:

Այս մասին տեղի ունեցած դիմումի մը վրայ Ազգ. վարչութեան Պատկ. Բաղաժակեան ժողովոյ կրահանգով բացուած քննութեան մէջ տեսչական և բժշկական տեղեկագրերով հաստատուած է թէ՛ արդէն սրտի հիւանդութեան ենթակայ այդ հէզ պատասխան մանր արդիւնք է ստատիկ թոքապտուց մը և ո՛չ մէկ տանջութիւն ունի յերկրածոյ խոշտակութիւն մը հետ:

Նմանապէս բարեփոխեալ հետէ է ճշմարտութիւնը ըլլալէ ա՛յն յայտարարութիւնը թէ՛ 42 օր անկողնոյ ծառայած ըլլայ ան, ինչպէս նաև այն հաստատումը թէ՛ իր հայրը պաշտօնապէս գիտնում կատարած ըլլայ Խորհրդոյ մօտ և անխելի մնացած, Ուսումն. Խորհուրդ Չիբուհեան Գրախ.

Առեւտրաբ. ՏՕԲ. Տ. Էնճիկեան և Առեւտրաբ. Վ. Ղ. ՊԱՍԿԱՆԵԱՆ

ԳՐԱԿԱՆ ԲԵԿՈՐՆԵՐ

ԵՒ ՊԱՏՐԱՍՏԱԲԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

65 Կեսար՝ պատերազմը նպատակաւոր կերպով վերջացնելէ յետոյ Պոմպէոսին արձանները շինել տուաւ. Կիկերոն այս մասին ըսաւ «Կեսար՝ Պոմպէոսին արձանները կանգնելով ամբողջաց իր բնիկները»:

66 Յուլիոս Կեսար, երբ իմացաւ թէ իրեն օգնութիւն բերող նաւատորմը սպանուի կողմէ յաղթուած և ցիրուցան եղած է, այդ ճգնաժամի մէջ տանոց ինքզինք կորսնցնելու, իրեն օգնական զօրք բերելու պաշտօն ունեցող տեղապահին ընդատալ երթալու համար ձգ որսի մը նաւակը կը նետուի ձամբաւ սաստիկ ալիկոծութեան կը բռնուին. Կեսար երբ կը տեսնէ որ նաւակը վախէն կը զոզոյայ, անոր կըսէ «Ինչո՞ւ կը վախնաս, դուն կեանքդ ու անոր բախտը կը տանի»:

67 Յուլիոս Կեսար, Ալիսիէ հասնելով երբ նաւէն ցամաք կ'իջէր, ինչպէս Արիկա զի՛ք շրջապատող զինուորներուն շարագուշակ պարագայ մը պիտի երևար եթէ ճիշտեցի քեզ, Ալիսիէ՛ս ըսելով այդ վիճակը բարեզուշակ նշանի մը չի վերածէր:

68 Գոմեթիանոս կայսր իր յարկարածինը կը քաշուէր, ուր ճանձերը բռնելով հերիւնին կանցընէր և այնպէս կ'զբոսնար. Պալատական մը՝ վերջին կրեագոսին հարցուց թէ կայսրը քով մտող կայ թէ ոչ, Անիկա պատասխանեց որ «Բոլոր գտնուող ճանձը մէկ հատ չէ» բայց այս կատակարանութեան փոխարէն իր կեանքը տուծեց:

69 Հոռովայնցի զինուոր մը դատ մը ունէր, Օգոստոս կայսրէն խնդրեց որ զի՛ք պաշտպանէ. կայսրը՝ պալատականներէն մէկուն յանձնարարեց որ զայն գատուարներուն քով առաջնորդէ, զինուորը առական անվեհեր զբոսնուցաւ Օգոստոսին լսելով թէ «Ճէր իմ, երբ Ակատիսի պատերազմին վրատանդի մէջ էիք, ես Ձեզի նկատմամբ այս կերպ չի վարուեցայ, Ձեզի համար ամառը կ'առուցայ» միեւնոյն ատեն իր ստացած վերքերն ալ ցոյց տուաւ. Օգոստոս՝ այս մեղադրանքէն այնչափ

Վ ԵՐ Զ Ի Ն Ժ Ա Մ

ՀԱՅԱՍՏԱՆ ԱՐՇԱԽԱԽՈՒՄԲ ՂԻԿԵԼՈՒ ԽՆԴԻՐԸ ԿՐ ՔՆՆՈՒԻ

ԺԸՆՎ 19.— Այն յանձնաժողովը, որ պաշտօն ունի իր կարծիքը յայտնել Մ. Թաքէ Ետէքթուի առաջարկին վրայ, որ է արշտատխումբ մը կազմել Ռուս մասնից գործակցութեամբ օգնելու համար Հայաստանի, կը քննէ այդ խնդիրը:

ԱԶԳԵՐՈՒ ԺՈՂՈՎԻ ԵՒ ՇՄՍՈՒԿԱԳԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՆԴՐՈՅՆ ՎՐԱՅ

ՂՈՆՏՈՆ, 20.— Ժրնէվի ժողովը յիշատակագիր մը զրկեց նախագահ Մր Ուլիսընի, Հայկական խնդրոյն նկատմամբ ժողովին նիստերուն մէջ կատարուած խորհրդակցութիւններուն մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՆԴԻՐԸ ԵՒ 25 ՄԻԼՈՆ ՏՈՒՐԻ ՓՈՒՍՏՈՒՈՒԹԻՒՆԸ

ԺԸՆՎ, 20.— Ազգերու Ընկերակցութեան ընդհ. ժողովը երէկ առտու շարունակեց վիճաբանութիւնը հոգատարութեանց վերաբերեալ խնդիրներուն վրայ:

Սրկարքէն Զուսումնասիրեց հայկական խնդիրը և հաւանեցաւ որ 25 միլիոն տուրքի փոխառութիւն մը ըլլայ Հայաստանի ԶԸՆԳԻ Ժողովը ի վերջոյ ընդունեց Մ. Վիլիամիտի տեսակէտը. որ Ազգ. Ընկերակցութեան վրայ իր ձգէ Հայկ. խնդրոյն լուծման պատասխանատուութիւնը:

ԴՍՇՆԱԿԻՑՆԵՐԸ ԵՒ ԹՈՒՐԻՔԻԱ

«Էքսքա» յայտնելով թէ Դաշնակիցները նիսի վեհաժողովին գումարման թուականը դեռ չեն որոշած, կ'աւելցնէ որ ըստ իր տեղեկութիւններուն, վեհաժողովը առաջին օրէն իսկ պիտի սկսի քննել Մ. Բէսիմի հետ տնտեսապէս բաժակցութեանց սկսելու մասին կոծա Մֆօրցաի տառաջարկը:

ԳԵՐՄԱՆ ԳՆՀՆԺՍՈՒՆԳԻՆ Ի ՆՊԱՍՏ

«Աժանս Ռէնան» կը ծանուցանէ թէ գերման գահաժառանգի բանակին նախկին սպաներուն մէջ զօրաւոր շարժում մը կը նշմարուի, զայն Բրուսիոյ գահը բարձրացնելու համար կը հաւատան թէ, քայլերին որդուոյն կողմնակիցները հրաէ չեն խորհիր անոր տալու Գերմանիոյ կայսր տիտղոսը, սակայն կուզեն միայն վերահաստատել Բրուսիական թագաւորութիւնը:



ՀԱՊՍՊՈՒԻԿՆԵՐՈՒ ՄԵՔԵՆԱՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Պէլլորտի «Բոլիթիք» թերթը կը հրատարակէ մանրամասնութիւններ շուկայի մէջ Հապաղորդիչներու մեքենայութեանց մասին... հիմնուելով Ակրամի մէջ ձեռքարկուած Աւստրիացիներու տեղեկութեանց վրայ:

ԱՔԷՆԻ ԳԵՐՄԱՆ ԴԵՍՊԱՆԸ

Կը ծանուցանեն թէ Յունաստանի և Գերմանիոյ միջեւ յարաբերութիւնները վերջապէս դաշնադրին հելլէն խորհրդարանին կողմէ վաւերացուելէն ի վեր վերականգնուած ըլլալով, գերման կառավարութիւնը որոշած է քիչ աստիճանով զիւրաւարտական ներկայացուցիչ մը ղրկել Աթէնք:

ՌՈՒՄԱՆԻՈՅ ԳԼՃԱԺԱՌԱՆԳԻՆ

ՆԱԿԱՆԱՄՕՍՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Բարեկի Ռումէն ներկայացուցիչ իշխան Կիքա, Վերթի Բարեկիցիի մէջ թղթակցին հետ ունեցած տեսակցութեանը միջոցին, ի մէջ այլոց մասնաւորաբար յայտարարած է թէ Փաօ իշխանին նշանախօսութիւնը ընդ Փոսթանի թաղարանին ազդիւնը քաղաքական սեւ նշանախօսութիւնը չունի Ռումանական դահլիճին մէջ միայն Մ. Թաքէ Եանէսքուի ներկայութիւնը բաւական է ապահովելու Ֆրանս, հարաբերութիւնները:

ՍԵՐԳԻԱ ԵՒ ԳՈՒԼԿԵՐԻՆ

Պուլկարէա մերժած ըլլալով յանձնել Նէօյի դաշնագրութեամբ նախատեսուած երկաթուղիի իրեզնէները և գործադրել զինաթափութեան պայմանները: Եւսեօ Սլաւ կառավարութիւնը դադարեցուցած էր ամեն հարկաւորութիւնը Պուլկարիոյ հետ և նոյնիսկ գէւտագիտական յարաբերութեանց խնդար մտաւորաւ կ'երկէր:

Պուլկար կառավարութիւնը պաշտօնական զեկուցագրով մը կուգայ յայտարարել թէ Նէօյի դաշնագրով նախատեսուած երկաթուղիի իրեզնէները պիտի յանձնուին Սերպ կառավարութեան կարիքի նպոճին չափ փութով: Զեկուցագիրը յայտ կը յայտնէ ի վերջոյ թէ Սերպիոյ հետ բնականօրէն յարաբերութիւնները չպիտի չուշանան վերակտելու:

ԱՐԵՎԵԼԵԱՆ ԽՆԴԻՐԸ

Չորեքշաբթի օրն էր որ, Ֆրանս, Երեսփ ժողովին մէջ վիճարանութեան պիտի դրուէր, Արեւելի խնդրին մէջ Ֆրանսայի քաղաքականութեան մասին հարցապնդումը: Վիճարանութեան պիտի դրուէր նաև Յունաստանի մէջ տեղեկուած նոր կացութիւնը:

Բոլոր շրջանակներու մէջ, միծ շահագրգռութեամբ կ'սպասեն, յանուն Ֆրանս, կառավարութեան վարչապետ Մ. Լէյկի ընկերք յայտարարութիւններուն:

ՓՐԱՆՍԿԱ ԵՒ ԹՈՒՐԿԻԱ

Պուլէն կը հարգողութի «Բըթի Ժուռնալի», Ֆրանսացի բարձր պաշտօնատար մը, տեսակցութեան մը մէջ ջանացած է ցոյց տալ ստիպողականութիւնը՝ բանակցելու Քէմալի հետ, որուն դատար հետզհետէ կը ծաւալի Աւելցուցած է թէ Իտալիա գտած է այն ճամբան որ կը տանի դէպի Էնկիլարու ուր կը նստի Քէմալի կառավարութիւնը և որուն հետ Անգլիա պիտի ուզէ նոյնպէս հասկացողութեան գալ:

ԿԱՑՈՒԹԻՒՆԸ ԶԷԽՕՍԼՈՎԱԿԻՈՅ ՄԷՋ

Բրակաէն կը հարգողութի թէ, կացութիւնը ծանրացած ըլլալով, Չէխօսլովաքիոյ բազմաթիւ քաղաքներուն մէջ պաշարման վիճակ յայտարարուած է: Մեծամասնականները միեւնոյն ատեն կը ձեռնարկեն ահաբեկիչ միջոցներու և փորձերու Ձեռք անցուցած են բազմաթիւ գործարաններ, մասնաւորաբար Բրակաէն քիչ հեռու շաքարի գործարան մը:

ԱՂԳԵՐՈՒ ԴՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Աղգ. Դաշնակցութիւնը իր վերջին նիստին մէջ որոշած է կազմել յանձնախումբ մը որ պիտի քննէ թէ, մամուլին կողմէ՝ Քէմալի և Սովիէթներու միջև համաձայնութեան մը մասին, տրուած լուրերը որքան ճիշդ են: Ուրիշ քննիչ յանձնախումբ մը տեղեկութիւններ պիտի հաւաքէ Փսքը Ասիոյ կացութեան, մասնաւորաբար կիներու և տղայոց վերապահուած կեանքի պայմաններուն վրայ:

ԻՌԱՆՏԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

Լոնտոնէն կը հարգողութի Իւրանտաի մէջ կարգը վերանաստատելու համար Ֆեր. Չլանականի նախաձեռնութիւնը ձայնած է, նկատելով որ ըստ իրեն առաջարկին հարկ կ'ըլլայ բանակցել ուղղակի իրանաստական հանրապետութեան նախագահ տը Վալէթաի հետ: Մ. Օ'Ֆլանականի ուղղած իր մէկ նամակին մէջ Մ. Լոյս ձորձ ցոյց կուտայ թէ, ամենապայման համաձայնութիւն անկարելի պիտի ըլլայ, ցորչափ անիշխանականները յամուին հանրապետութիւնը հրաշակելու:

ՇԵԼԼԵՆ ՆԱՌՈՐԱՐԱՑ ԽՈՐՀՈՒԴԸ

Շելլէն նախարարաց խորհուրդը Երեքշաբթի օր երկուր նիստ մը ունեցած է ուր կացութեան մասին խորհրդակցած է:

Յետոյ Մ. Ռալիս վացած է Ֆրանսական զեկուցագրուն որ տեսակցած է Մ. աը Պիլիի հետ: Կառավարական տղերքէ ստացուած տեղեկութեան համաձայն, այս տեսակցութեան միջոցին Ֆրանսայի ներկայացուցիչը ծանուցած է Շելլէն վարչապետին թէ, իր կառավարութեանէն հրահանգ ստացած է սոսյամ Մալ Աթէնքի մէջ, առանց անմիջական շտաբփոփոխութեան ունենալու:

Միւս կողմէ կը հարգողութի թէ Չօք. Կրամի ֆրէզին Մեծ խաչի պատուանշանը տալու համար արտօնութիւն խնդրուած է Ֆրանս, կառավարութիւնէն Մ. Ռալիս խօսելով այս պարագային վրայ, շեշտած է թէ, Թագաւորը աւսով կուգէ վարձատրել Ֆրանսացի զօրավարը իր այն բարձր ծառայութիւններուն համար, զորս մատուցած է Շելլէն բանակին:

Նոյնպէս կառավարական աղբիւրէ կը հարգողութի թէ, կառավարութիւնը կը յուսայ զիմազրուել անտեսական կացութեան, ելմտական մի քանի կարգադրութիւններով:

Բ Ա Ց Ո Ւ Ա Տ Է  
ԶԱՐԵՆ ԳԻՈՐԳԵԱՆԻ

ՇԱՊԻԿԻ ՄԵԾ ԱՇԽԱՏԱՆՈՅԸ (աթ ըլիէ)

Կաշխատին ամենապարզէս շապկագործներ և կը կարուին նորապակե նորաւնւորեանց վրայ շապիկներ, օձիկներ, գրաւարներ, գիշերանոցներ ևն. ևն. Կեդրոնաստիղի Առաջնորդարանի դրան դէմ թիւ 5

ԱՔՐՈՐՈՒՄ ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ

Գաւառներ և Իզմիրի ապագրանք կ'ընդունուին մեծախանակ և չիտրախանակ

Գերպատը լանսարդէ կարողէր և ծախք մեզմէ 1 շապիկ և 1 օձիկ կարողէր 75 դրոշ  
» » » » 1 օձիկ կարողէր 10 »  
» » » » 1 գրավարի կարողէր 10 »

Table with 2 columns: Item description and Price. Includes items like 25-30 րոպէս շապիկներ, 175-200, 200-225, etc.

ՇՏԱՊԵՏԷՒ ԱՌԻՔԷՆ ՕԳՏՈՒԹԻՒՆ

Advertisement for Longines watches. Includes text: Ամենէն ճշտապահ և ամենէն տկուր քոյր ժամացոյցներուն, ղեղիակերպած և հոյակ հաւեած Անգլիոյ, Ֆրանսացի, Ամերիկացի և Իտալիոյ մէջ: Ետեւած է աստեղապատ մեքենաներէ գաւ



Advertisement for a watch store. Includes text: ՇՏԱՊԵՏԱԿԱԼԻՔ, Երեսփ Ա. Կ. Անտոնեան և Ընկ., Ժոյսա Խան Թ. Յ. Իջեր



ԱՎԱՆՍԵՍԻ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Հայաստանէ նոր վերադարձած Գ. Մովսէս Մարկոսեան Այնթապցի երկ- ասարորը խմբագրատունն այցելելով կարգ մը կարեւոր տեղեկութիւններ հազարգոծ է Հայաստանի մէջ կա- տարուող տխուր դէպքերու մասին, որոնցմէ քանի մը հատը յարմար կը գտանք ներկայել մեր ընթերցողնե- րուն Գ. Մովսէս Մարկոսեան փոխ- տեղակալի պաշտօնով գտնուած է Տրդ գունդի 4րդ վաշտին մէջ և եղած է թէ Կարս և թէ Ալեքսանդրօք:

Յիշեալ երիտասարդը կ'ըստինէ նաև որ երբ Պոլիս հասած է, դիմած է Հ. Յ. Գ. օրկան և պատահած զէպ- քերու պատասխանատուութիւնը ու- րիշներու վրայ փնտռել ջանացող «Ճա- կատամարտ» խմբագրատունը, բայց տնոր անկողնակալ խմբագրիչները մերժած են հազարգուծի ուղուած սե- ղեկութիւնները մտիկ իսկ ընել:

Եւ ինչ կ'ըսէ Գ. Մովսէս Մարկոս- եան թէ Կարսի յըռմը 4րդ գնդի հրամանատար Մազպատօֆի կ'պատկա- ճի, որ յետոյ երեւան ելած իր գու- ւանձանութիւն ամբողջ արքայու համար

անձնասպան եղած է: Կարսի անկման անթիւ կ'իկարագրէ Ռուստեայոց ընթացքը, Թրքահայոց դէմ անոնց ցոյց տուած ասեղութիւնը և այն բոլոր ընդհարումները որ յա- րաջ եկած են հրաշքալուստեան կոխերու մէջ: Ռուսահայոց կ'ըսեն կզեր, ճիւ- չու՛ն եկեր էք մեր հողը, չերթա՞ք մեր Հայաստան տեղաւորուելու:

Չարմաղամբ լսեցինք տեղեկա- րեր Գ. Մ. Մարկոսեանէ, որ բարլա- մէնցի անդամներ, կառավարական գործակալներ, նախարարներ ասան- ձին անանձին խումբեր կ'զգամ (ինք- նազուրիս կ'զգործեն եզեր, ասանց վե- րին հրամանատարութեան հրահանգ- ներուն կարեւորութիւն տալու, սակից գատ կ'հաւատտէ թէ հակառակ հացի, շաքարի և այլ իրթեղեններու ասա- տութեան, բուն գործը բոլորովին զրկուած և անխնամ կ'թողուի եզեր:

Ինք անձամբ կարգացրեր է նամակ մը, որ Սարը-Ղամբընգրուած է եզեր թուրք սպայէ մը ուղղուած հայ ճէ- թէսխումբի մը ռուսահայ հրամանա- տարին, անոր շնորհակալութիւն յայտ- նելու համար զրկուած հազարատներուն համար և անոր հաւատարմութեան թէ այդ տեսակ տաքութիւններու միշտ պատ-

րաստ են իրենց փափաքած փոխարի- նութիւնները ընել հնչուն ուղիով, թղթագրումով կամ ուրիշ յարմար գատուած եղանակներով, մինչդեռ հայ զինուորները մեծաբոյն մասը անխը- նամ վրայ պիտով, ասանց կոշիկի և վերաբերուի թողուած են:

Այդ ձեռք անցուցած նամակը Գ. Մարկոսեան կ'տանի իր հրամանատա- րին Սեյիկեանի սրպէտի քննութիւն բանայ և անցուցարձին իրազեկ գառ- նալով, յանցարորները գտնէ, սակայն անհետեանք կ'մնայ և երբ այդ նա- մակը կ'պահանջուի, պահանջողը կը վճարուի:

Թրքահայաստանէ կամ արտասան- մանէ հասած կամաւորներէ անոնք, որոնք քիչ շատ սրտով ունին եզերի յետ քննութեան իշխանի Տրդ գնդին մաս կազմող անձանց ասպակախուած- քերու կողմէ կ'կողոպտուին և ընդդի- մացողներն ալ կ'պահանջուին եզեր:

Ալեքսանդրօքոյի Ռուսահայ Ժո- ղովուրդին ունեցած մասնութիւնը ալ սակի և անբացարձեկ կ'պահանջ, որոնք կ'ըսեն եզեր թէ եկողները (Յուրքերը) իրենց կզարյունեն են և թէ թրքահայերը եթէ չեն ուզեր անոնց հասած ժամանակ մնալ, կըր-

նան մեկնել: Եւ իրաւի մեկնողներու վիճակը արդարաւաստելի և արտաճմարիկ կերպով կը նկարագրէ, որոցմէ շատեր կայարանը կողոպտուած են յօժարու- թեամբ, որպէսզի չոգեկառքի մէջ տեղ տան պաշտան հայները և խեղճ ու թշուա կ'հասնին եզեր Թիֆլիզ:

Ալեքսանդրօքոյէ հազիւ 17 վերսթ հեռու երբ կ'գտնուի եզեր թէսամի բանակը և գ'գուցիւրները արդէն ըս- կըրած են քաղաքին վրայ ինչու, տեղ- ւոյն հրամանատարը և սպանները ան- փայթ ու անտարբեր կ'իներու և ազ- ջիկներու հետ պոսյտ կը կատարեն եզեր քաղաքին շրջակայքը:

Վերջապէս Գ. Մովսէս Մարկոսեան կ'պատմէ տխուր գրուածներ և զար- մաւք կ'ըստինէ որ այս բարձր շարեաց պատճառ, հասած զժրագրութեանց աներեւակայելի զեղծումներուն, անի- բաւութիւններուն իբրև պատասխա- նատու ինչո՞ւ միմիայն կ'յիշուի Խա- տիսեանի անունը, որ կրցած է աս- կայն, կ'աւելցնէ, իր օճիկը ազատել, ինչու անոր միւս ընկերներուն վրայ չեն խօսիր, որոնք անոր շարի և տ- նորմէ սակի թերեւ անուար պա- տասխատեսութիւններ ունին Հա- յաստանի պիտուն հասած այս գժրագ- րութեան մէջ:

ATLANTIC ASSURANCE

COMPANY  
CORNHILL

LIMITED.  
LONDON.  
E. C. 3.



Գ. Ո. ՈՍԿԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԻՉ  
ՐԶՄԻՐ, ԲԱՆԱԺ ԲԵՇԵՐՄԱՆԻՉՈՂԼՈՒՎԻՐԻ ԿՐԻՐ ԵՍԿԻ ԹԻՉ

Փնտուեցէք ԱՐԵՎԵԼԵԱՆ ՄԱՍՈՒԼԸ

ԳՅՆ ՄԱՐԶԻՒ ԳԻՄԱՑ Գ. ԳՕՄԹԻ ԼՐԱԳՐԱՎԱՅԱՌԻ ԵՄԵՆՈՒԹԵ

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ Ի ԿՈՎԿԱՍ ԵՒ Ի ՀԱՅԱՍՏԱՆ

Ը.

Հեռաքրքրական է արգարե գիտ- նալ թէ մինչ վարաստանի մէջ 4200 բուլլի համարժէք է մէկ լանդլիական սթէրլինի, ինչպէսզոր, Հայաստանի մէջ նոյնի արժէքն է 20,000 կրուպի, որով ինչպէս կը տեսնուի վրացական բուլլին գրեթէ 5 անգամ աւելի կ'ար- ժէ քան հայկականը:

Այս պարագաներու տակ իմ Հա- յաստան մուտքս կարելի չէր, և Քնկա- տելով սուգ ժամանակի մէջ ինձ վըս- տահուած պատգամներուս յանձ- նարարութիւնը կատարելու դժուա- րութիւնը, կացութիւնը ինձ կը թուէր յուսահատական. Հայկական Միտիան իր միջոցներով չէր կրնար օգնել: Այս անկ կացութիւնը սակայն չի շարու- նակեց երկար, Բաղդը ժպտեցաւ ինձ Լեոն Եւնթի և իր պատուիրակու- թեան Մոսկուայէն վերադարձով և շնորհիւ հայկական միտիայի ընդհա- նուր քարտուղար իշխան Միքայիլ Թուրանի մ'ձեռնած աջակցութեան, ես յաջողեցայ մուտք գտնել այն կա- տարութիւն մէջ որ պատուիրակու- թիւնը պիտի տանէր Երևան: Վրաս- տանի երկաթուղին կ'երկարէր մինչև

իր սահմանագլուխը. Ստանիսէն կըս- կուէր հայկականը, որ Չարս Բիլիսէի և Ալեքսանդրապոլի ճամբով կ'անցը- նէր Երևան և անտի Չուլֆաս Հայաս- տանի վայրաշարժերը և կառքերը ի- րենց վրայ կը կրէին երեք տառեր Հ. Հ. Ս. որ կը նշանակեն հայկ. հանր. երկաթուղի. վայրաշարժը կը վառէր փայտ քանի որ ոչ անուր կար ոչ ալ մաշուի վրացական կառքերը մաքուր են և հարգատաւէտ, Հայկները մա- շած, ներկերը թափած և նստարան- ները մերկացուած են իրենց թուիչ ծածկոցներէն, որով ուղևորը անմի- ջապէս կ'զգայ տեղափոխութեան տար- բերութիւնը: Չափանկները, որոնք վայրաշարժին կամ կառքերու ճան- րութիւնը կը կրեն և շարժման մի- ջոցին, ցնցումը կը մեղմացնեն, յոգնած են և յայտնապէս չեն կրնար երկար առկալ ճնշումի և ճօճման:

Պաթումէն Թիֆլիզ և անտի զէպի վրաստանի սահմանագլուխը ճամբորդութեան միջոցին քնականա- բար ուղևորներու մէջ կը գտնուէին օտարականներ, վրացիներ, Ռուսեր, Թաթարներ և Եւրոպացիներ: Սակայն Սանահինէն անդին հայկական երկա- թուղու վրայ բոլոր ուղևորները ես գաայ հայեր, որոնք կը խօսէին ա- րևմտեան բարբառով. մեծ հաճոյքով կ'ուներգրէի և կ'ըզգայի թէ կը ճամ- բորդեմ զէպի Հայաստան և արգէն

իսկ կը գտնուիմ անոր հոգին վրայ: Մեր խուցին մէջ կը գտնուէին Տիկին Աթաբէկեան և իր գուսարը, զինուոր- ական բժիշկ մը և Մոսկուայէն բը- ժըշկուէի մը, որ Եւրոպայի ճամբով անցեր ըր կովկաս անտի Ալեքսանդր- րապոլ գալու և միանալու հոն իր եղ- բոր, որ բանակին մէջ սպայ էր: Բը- ժըշկուէին մեծ զրկանքներով ՚է և նե- ղութիւններով կուգար Մոսկուայէն և կը թուէր ընկճուած և յոգնած, ես տեսայ քրոջ և եղբոր գիրկնախառնու- մը Ալեքսանդրապոլի կայարանին մէջ և տեսարանը յուզիչ էր: Տիկին Աթա- բէկեան այրին է Պաթումի հայկական հիւպատոսին եղբոր, որ շտաբակի է Իւանէ Աթաբէկի աշխուսական տնտէրն:

Տիկին Աթաբէկեան և իր շնորհա- լի գուսարը Թիֆլիսէ վաղարշապատ կը գտնային իրենց կալուածներուն, սակայն կը թուէին մտահոգ թուրքե- րու Օլթիի վրայ գործած յարձակում- ներու հետեանօք, քաղի անոնք ա- կանատես եղած էին Սարտարապատի կալուածներուն երբ Չոր. Նազարբէկեան հայ չիւղագիտութիւնը ունեւորով իր ետին վճռական յաղթանակով տարու Խալիլ փաշայի բանակին զէմ և հար- կադրեց զնա հաշտութեան և ճանչ- նալու Երևանի անկախութիւնը:

Ալեքսանդրապոլ հին շիրակաւանն է համանուն գաւառին վրայ զէպի հա.

բաւ է Արագածը իր տարածուն քը- ղանցքներով և քառեակ կատարներով որոնք ծանրեցնուած կը նմանին Արա- զած լեռի է. իր վրայ չկայ բուսակա- նութիւն. անոր բարձրութիւնը դաշ- տէն 5000 սաք է, իսկ ծովու մակե- րեսէն 13,000 սաք: Արգի Ալեքսան- Չըրապոլը բաղդասարը նոր քաղաք է, անցեալ դարու սկիզբը գիտ վրա- ցիներու տակ կը գտնուէր և ծանօթ էր կրմոր անուսով որ աննշան պիւղ մ'էր: Ռուսական զրաւումէն ետք ծաղկեցաւ և աստիճանաբար վերած- ունեցաւ բերդաքաղաքի և պահեց իր կարեւորութիւնը իբր այն մինչև վեր- ջին Ռուս և Թրքական պատերազմը, երբ Կարսն անցաւ Ռուսներու Գա- զաքին արևմուտքէն կ'անցնի Ախալ- Խանը որ Անիի հարաւ արևելքէն, օ- ձապայտ գուրուտներով կը միանայ Կարս գետին և անոր հետ կը թափի Արաքս: Արագած կը բաժնէ Երևանի գաւառ Արաքսի հովիտէն, որով կա- լելի չէ շեշտակի հոն իշուել, այլ պէտք է շրջան ընել Երևանը քիչ մշակուած է և Ախալքեանին ջուրը ոռոգման համար բաւական չէ, այն- պէս որ կառավարութիւնը ծրագրած է Սեւանի լիճէն ջուր բերելով ա- ւաւեր արձակել ջրաշարին մէջ անէն ուղղութեամբ:

(Արեւ) Ե. Ս. ԳՈՒՐԵԱՆ (Շարունակելի)